




ՄԱՍՆԱԳՆԱԾՈՒՄ • ՓՈՐՈՒ • ՀԱՆՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ISSN 1829-0280

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



## ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

## MESSENGER

OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2020 [1]  
ԵՐԵՎԱՆ



## ՎԱՐԴԵՎԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, մանկավարժական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

## ԱՆԱՀԻՏ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

## ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ կրթական համակարգը միջազգային ասպարեզում ճանաչելի և մրցունակ դարձնելու նպատակով Հայաստանը 2005 թ. մայիսին պաշտոնապես միացավ Բոլոնյան գործընթացին՝ պատասխանատվություն ստանձնելով ինտեգրվելու Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ)<sup>1</sup>: ԵԲԿՏ-ի հիմնադրման կարևորագույն սկզբունքներից մեկը կրթության որակի ապահովումն է:

ՀՀ Կառավարությունը 2008 թ. նոյեմբերին ստեղծեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը, որի հիմնական նպատակը բարձրագույն ուսումնական հաստատության պետական հավատարմագրման միջոցով որակի արտաքին ապահովման գործընթացի իրականացումն է՝ նպաստելով բուհի թափանցիկության և հաշվեպնդակաճանության բարձրացմանը, աջակցելով բուհում կրթության որակի մշակույթի ստեղծմանը: ՀՀ տարածքում գործող բոլոր բուհերը մինչև 2018 թ. դեկտեմբերի 30-ը պարտադիր պետք է անցնեն ինստիտուցիոնալ հավատարմագրում<sup>2</sup>: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) գործընթաց է, որը հավաստում է բուհի գործու-

<sup>1</sup> Տե՛ս 2005 թ. Բեռլինի նախարարական գագաթնաժողովի կայքէջ՝

<http://www.bologna-bergen2005.no/>,

<https://www.unl.pt/data/qualidade/bolonha/guide-to-the-bologna-process.pdf>:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ, ՀՀ Կառավարության 30.06.201 թ. N 978-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx? docID=94597>:

նեության համապատասխանությունը ՀՀ Կառավարության հաստատած հավատարմագրման չափանիշներին: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը կարևոր գործընթաց է բուհերի կառավարման համակարգերի գործունեության արդյունավետության գնահատման և կրթության որակի հավաստման տեսակետից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլից հետո կարևոր և արդիական խնդիր է բուհի որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունավետությունը և հիմնախնդիրները ուսումնասիրելը՝ ի դեմս ՈԱԱԿ-ի:

Ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել ինստիտուցիոնալ հավատարմագրման արտաքին գնահատման թափանցիկությանը և արժանահավատությանը վերաբերող հիմնախնդիրներ՝ առաջարկելով լուծումներ:

**Հիմնաբառեր.** Բոլոնյան գործընթաց, ինստիտուցիոնալ հավատարմագրում, որակի արտաքին ապահովում, որակի արտաքին գնահատում

JEL: I23, I28

**Ներածություն:** ՀՀ բարձրագույն կրթության զարգացման քաղաքականության կարևոր բաղադրիչ է ԵԲԿՏ-ին ինտեգրման գործընթացի ընդլայնումը և զարգացումը<sup>3</sup>:

Այդ ուղղությամբ ՀՀ բարձրագույն կրթության համակարգում 2005 թվականից ծավալվեցին բազմաբովանդակ և խորքային փոփոխություններ<sup>4</sup>: Կատարվող կարևորագույն աշխատանքներից էր եվրոպական չափանիշներին համապատասխան որակի գնահատման և ապահովման ազգային համակարգի ստեղծումը: Խնդիր դրվեց ստեղծել **որակի ապահովման արտաքին և ներքին համակարգեր**:

2018 թ. դեկտեմբերի 30-ին ավարտվեց ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլը, որի ընթացքում ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրվեցին ՀՀ պետական բոլոր բուհերը և մի քանի ոչ պետական բուհեր<sup>5</sup>: Առաջին շրջափուլից հետո նպատակ է դրվել ուսումնասիրել և վեր հանել արտաքին գնահատման հիմնախնդիրները՝ լուծումներ առաջարկելով գործընթացի հետագա բարելավման նպատակով:

**Գրականության ակնարկ:** 1999 թ. հունիսի 19-ին Բոլոնիայում Եվրոպայի կրթության նախարարների կողմից ստորագրվեց համատեղ հռչակագիր (Բոլոնյան հռչակագիր), որով նրանք պարտավորվեցին մինչև 2010 թ. ստեղծել ԵԲԿՏ և նպաստել ամբողջ աշխարհում եվրոպական բարձրագույն կրթական համակարգի տարածմանը: Բոլոնյան հռչակագրով ամրագրվեցին առաջնային համարվող 6 սկզբունքներ, ևս 3-ն ավելացվեց 2001 թ. Պրահայում, իսկ 1-ը՝ 2003 թ. Բեռլինում կայացած նախարարական գագաթնաժողովում:

<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ մասնագիտական կրթական համակարգի՝ ԵԲԿՏ-ին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիր», [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR10-14\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR10-14_1.pdf):

<sup>4</sup> Տե՛ս Ա. Բուդաղյան, Յու. Սարգսյան, Ն. Մանասյան, Մ. Սանթրոջյան, Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում, Զեկույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2012:

<sup>5</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.anqa.am/> → Գրանցամատյան → Ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյան:

ղովների ժամանակ<sup>6</sup>: Բոլոնյան 10 սկզբունքներից առանցքային էր համարվում կրթության որակի ապահովումը: Նախարարական բոլոր գազաթնաժողովներում արձանագրվել են որակի ապահովմանը վերաբերող հիմնախնդիրները և ձեռքբերումները, իսկ 2003 թ. Բեռլինի գազաթնաժողովում որակի ապահովումն առանձնացվեց որպես Բոլոնյան գործընթացի գերակայություններից մեկը՝ հաջորդ երկու տարիների համար: 2005 թ. Բերգենի նախարարական գազաթնաժողովում ընդունվեց Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) մշակած «Որակի ապահովման չափանիշների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված համակարգ»,<sup>7</sup> որի հիման վրա յուրաքանչյուր երկիր պետք է մշակեր համադրելի ազգային չափանիշներ, ընթացակարգեր և ուղենիշներ՝ աջակցելով եվրոպական համագործակցությանը կրթության որակի ապահովման ասպարեզում:

2007 թ. մշակվեց և ՀՀ ԿԳ նախարարության երաշխավորությամբ տպագրվեց «ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի համապատասխանեցումը եվրոպական (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին» ուղեցույցը,<sup>8</sup> որը հայեցակարգային հիմնադրույթներ էր ներկայացնում բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային համակարգի ձևավորման և համապատասխան բարեփոխումների ռազմավարության համար:

ՀՀ-ում Բոլոնյան գործընթացի 10 սկզբունքների ուղղությամբ կատարվեց հսկայածավալ աշխատանք<sup>9</sup>: ԵԲԿՏ-ին ինտեգրման ուղղությամբ կարևորագույններից էր եվրոպական չափանիշներին համապատասխան որակի գնահատման և ապահովման ազգային համակարգի ձևավորումը: ՀՀ Կառավարության 2008 թ. նոյեմբերի 27-ի N 1486-Ն որոշմամբ ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը<sup>10</sup>:

ՈԱԱԿ-ը, ինչպես նաև ՀՀ-ում գործող բազմաթիվ բուհեր ընդգրկվեցին Եվրոպական միության տարբեր ծրագրերում՝ ուսումնասիրելով եվրոպական երկրների առաջավոր փորձը: ՀՀ բուհերում որակի ներքին ապահովման համակարգերի ստեղծմանը և որակի արտաքին համակարգի ամրապնդմանը նպաստեցին Եվրամիության TEMPUS-ի DIUSAS (2010-2012) և PICQA (2010-2013) ծրագրերը,<sup>11</sup> որոնք նպատակաուղղված էին որակի ներքին և

<sup>6</sup> Տե՛ս Բոլոնյան գործընթաց և ԵԲԿՏ-ի կայքէջ՝ <https://ec.europa.eu/education/policies/higher-education>

<sup>7</sup> Guide to The Bologna Process, The UK HE Europe Unit, January 2005, p. 39, <https://www.unl.pt/data/qualidade/bolonha/guide-to-the-bologna-process.pdf>

<sup>8</sup> Տե՛ս **Յու. Սարգսյան, Ա. Բուդաղյան**, ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի համապատասխանեցումը Եվրոպական (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին: Բարեփոխումների ռազմավարության հայեցակարգային հիմնադրույթներ, Եր., Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2007:

<sup>9</sup> Տե՛ս **Յու. Սարգսյան, Ա. Բուդաղյան**, Բոլոնիայի գործընթացը Հայաստանում, Ուղեցույց, 2008:

<sup>10</sup> Տե՛ս «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ ստեղծելու մասին ՀՀ Կառավարության 27.11. 2008 թ. N1486-Ն որոշում, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=96199>:

<sup>11</sup> Տե՛ս Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակի պաշտոնական կայք՝ <https://erasmusplus.am/home/wp-content/uploads/2016/12/Tempus-Finished-Projects1.pdf>:

արտաքին ապահովման համակարգերի ներդրմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

2009-2012 թթ. ՈԱԱԿ-ի գործունեությունը հիմնականում ուղղված էր որակի արտաքին ապահովման համակարգի մշակմանը և գործարկմանը՝ համապատասխան Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների (ՈԱԵՉՈԻ) պահանջներին: «ԵԲԿՏ-ի որակի ապահովման չափանիշներին և ուղեցույցներին» համապատասխան մշակվեցին և ՀՀ Կառավարության 2011 թ. հունիսի 30-ի N 959-Ն և N 978-Ն որոշումներով հաստատվեցին «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները» և «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը»: Մշակվեցին և հաստատվեցին գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման չափանիշները և չափորոշիչները, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման ընթացակարգերը,<sup>12</sup> ինչպես նաև «Մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույցը»<sup>13</sup>: ՈԱԱԿ-ը, ՀՀ կրթության որակի ճանաչման, համադրելիության և մրցունակության ապահովման նպատակով, ակտիվ գործունեություն է ծավալում միջազգայնացման ուղղությամբ՝ անդամակցելով մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում միջազգային զանազան կառույցներին<sup>14</sup>: 2011 թվականից այն համարվում է «Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցի (INQAAHE)» լիիրավ անդամ, 2016-ից՝ «ԱՄՆ բարձրագույն կրթության հավատարմագրման խորհրդի որակի միջազգային խմբի (CIQG)» անդամ, 2017-ից՝ «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA)» անդամ և ամենակարևորը՝ «Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA)» լիիրավ անդամ: Միջազգային կառույցներին անդամակցելուց բացի, **ՈԱԱԿ-ը 5 տարի ժամկետով (2017-2022 թթ.) ընդգրկվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR)**<sup>15</sup>:

2011 թ. երկրորդ կիսամյակում ՈԱԱԿ-ն իրականացրեց երկու բուհերի՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական (ԵՃՇՊՀ, այժմ՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան») հիմնադրամ) համալսարանների փորձնական հավատարմագրում՝ համա-

<sup>12</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.anqa.am/> → Հրապարակումներ → 2011 → ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, ՈԱԱԿ, 2011:

<sup>13</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.anqa.am/> → Հրապարակումներ → 2011 → Մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման ուղեցույց, ՈԱԱԿ:

<sup>14</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Միջազգայնացում:

<sup>15</sup> Տե՛ս Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական գրանցամատյանի պաշտոնական էջ, <https://www.eqar.eu/register/agencies/>:

ծայն հաստատված կարգերի և չափանիշների<sup>16</sup>: Փորձնական հավատարմագրման արդյունքում բարելավվեցին մի շարք փաստաթղթեր և ընթացակարգեր:

2012-2018 թթ. ՀՀ-ում գործող բոլոր պետական և մի քանի մասնավոր բուհեր անցան ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլը: Քանի որ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող գործընթաց է, հետևաբար առաջին փուլի ավարտից հետո շատ կարևոր խնդիր է բուհերի որակի արտաքին ապահովման համակարգի արդյունավետությունն ուսումնասիրելը՝ վեր հանելով առկա խնդիրները:

Բարձրագույն կրթության որակի ապահովումը ՀՀ բարձրագույն կրթության համակարգում զարգացող նոր մոտեցում է, և տարբեր փորձագետներ իրականացրել են բազմաթիվ ուսումնասիրություններ որակի ապահովման, ինչպես նաև Բոլոնիայի գործընթացի մյուս գործողությունների տեղայնացման ուղղություններով, սակայն որակի արտաքին գնահատման արժանահավատության և թափանցիկության հիմնախնդիրներին ուղղված խորքային ուսումնասիրություն չի իրականացվել: Գնահատման գործընթացն ինքնին սուբյեկտիվ գործընթաց է: Գնահատման թափանցիկության ու արժանահավատության ցուցիչներից ամենակարևորը, թերևս, տարբեր բուհերի միևնույն գործընթացի արտաքին գնահատման համեմատումն է, իհարկե, բուհերի համադրելի առաքելության և նպատակների դեպքում:

ՈԱԱԿ-ը համեմատական վերլուծություն է իրականացրել 2015-2017 թթ. ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատման ուղղությամբ,<sup>17</sup> սակայն վեր չեն հանվել վերոնշյալ խնդիրները: 2018 թ. ՈԱԱԿ-ի «Ուսանողության ծայն» նախագծի անդամները, հաշվի առնելով առաջիկայում բուհերի վերահավատարմագրվելու փաստը, իրականացրել են ինստիտուցիոնալ հավատարմագրված բուհերի համեմատական վերլուծություն՝ վեր հանելով ՀՀ բուհերում առկա համակարգային խնդիրները,<sup>18</sup> որտեղ ևս նշված խնդիրները չեն դիտարկվել:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության համար կիրառվել են համեմատության, վերլուծության, համադրության, դեդուկցիայի և ինդուկցիայի մեթոդներ:

Որակի արտաքին ապահովման գործընթացի արդյունավետությունը գնահատելու և արտաքին գնահատման հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով ընտրվել են անհրաժեշտ, հիմնարար և արժանահավատ փաս-

<sup>16</sup> Տե՛ս ՀՀ մասնագիտական կրթական համակարգի՝ ԵԲԿՏ-ին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիր, [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/2012/03/MAR10-14\\_1.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/03/MAR10-14_1.pdf):

<sup>17</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հրապարակումներ → 2018., 2015-2017 թթ. ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ի կողմից իրականացված ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատում: Համեմատական վերլուծություն:

<sup>18</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հրապարակումներ → 2018 → ՀՀ բուհերի համակարգային խնդիրները. հավատարմագրում անցած ՄՈՒՀ-երի փորձագիտական գեկույցների համեմատական վերլուծություն, ՈԱԱԿ, Ուսանողության ծայն, 2018:

տաթղթեր: Ուսումնասիրվել են ՀՀ 22 պետական բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման ներկայացված ինքնավերլուծությունը, փորձաքննության արդյունքում փորձագետների կողմից կազմված փորձագիտական զեկույցը,<sup>19</sup> ՈԱԱԿ-ի եզրակացությունը,<sup>20</sup> հավատարմագրման հանձնաժողովի որոշումները<sup>21</sup>:

Ուսումնասիրման համար առանձնացվել են միայն ՀՀ պետական բուհերը, քանի որ այս բուհերի առաքելությունները և նպատակները գրեթե համադրելի էին:

**Որակի արտաքին ապահովման արդյունավետությունը գնահատելու նպատակով ուսումնասիրվել են** բուհերի կայքէջերը, դրանցում ներկայացված բուհի զարգացման ծրագրերը, հաշվետվությունները, իրականացվող կրթական ծրագրերի թափանցիկությունը և այլն:

**Որակի արտաքին գնահատման գործընթացի թափանցիկությունը և արժանահավատությունն ուսումնասիրելու** համար խնդիր է դրվել հետազոտությունն իրականացնել երեք ուղղություններով.

- ա) *Բուհին տրամադրված ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամկետների և բացասական գնահատված չափանիշների քանակի միջև կապի ուսումնասիրություն*. վերլուծվել և համադրվել են միևնույն քանակով բացասական գնահատված չափանիշներով (երբեմն լրիվ նույն չափանիշներով) բուհերի հավատարմագրման հանձնաժողովի որոշումները՝ պարզելով՝ արդյո՞ք կապ կա այս երկու բաղադրիչների միջև:
- բ) *Անկախ փորձագիտական խմբի, ՈԱԱԿ-ի եզրակացության և հավատարմագրման հանձնաժողովի որոշումների ուսումնասիրություն միևնույն բուհի համար*. վերլուծվել և համադրվել են՝ արդյո՞ք համընկնում են կամ համադրելի են վերոնշյալ երեք որոշումները:
- գ) *Հավատարմագրման չափանիշի գնահատման արդյունքի ուսումնասիրում՝ կախված համապատասխան չափորոշիչների բավարարման արդյունքներից*. վերլուծվել, համադրվել և ընդհանրացվել են տարբեր բուհերի համար միևնույն չափանիշի գնահատման կախվածությունը համապատասխան չափորոշիչների պայմանների բավարարումից:

**Վերլուծություն:** Որակի արտաքին ապահովման գործընթացն իրականացնելու համար ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատվել է «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը»՝ որպես հավատարմագրման կարգի անբաժան մաս<sup>22</sup>: Հավատարմագրման գործընթացներն իրականացվում են երեք հաջորդական փուլերով՝

<sup>19</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հավատարմագրում → Փորձագիտական զեկույցներ → 2015, 2016, 2017, 2018:

<sup>20</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հավատարմագրում → ՈԱԱԿ-ի եզրակացություններ → 2015, 2016, 2017, 2018:

<sup>21</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հավատարմագրում → Հավատարմագրման հանձնաժողով → 2015, 2016, 2017, 2018:

<sup>22</sup> Տե՛ս ՈԱԱԿ-ի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/> → Հրապարակումներ → 2015 → ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ:

ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում բուհի կողմից (ինքնավերլուծություն), արտաքին գնահատում անկախ փորձագիտական խմբի կողմից (փորձաքննություն) և հավատարմագրման շնորհման կամ մերժման վերաբերյալ որոշման ընդունում ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովի կողմից:

ՀՀ Կառավարության կողմից հաստատված **մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ հավատարմագրման** համար ամրագրված 10 չափանիշը և այդ չափանիշներին համապատասխան ընդհանուր 57 չափորոշիչը գրեթե ամբողջությամբ ամփոփում են Բոլոնյան գործընթացի գործողությունների պահանջները, որոնք վերաբերում են ինստիտուցիոնալ մակարդակում բարձրագույն կրթության արդյունավետ կառավարմանը:

Մինչև 2018 թ. դեկտեմբերի 30-ը ՈԱԱԿ կամ հավատարմագրող այլ միջազգային կառույցներ դիմեցին ու ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացան ՀՀ-ում գործող բոլոր պետական բուհերը և մի քանի ոչ պետական բուհեր: ՀՀ-ում գործող 22 պետական բուհերից 10-ը ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացավ 2015 թ., 3-ը՝ 2016 թ., 3-ը՝ 2017 թ., իսկ 6-ը՝ 2018 թ.: Պետական բուհերից 20-ը հավատարմագրվել է ՈԱԱԿ-ի, իսկ 2-ը՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» (*Իսպանիայի «Որակի գնահատման և հավատարմագրման գործակալություն»* և Ֆրանսիայի «Գիտության և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհուրդ», 07.06.2018 թ.) և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամները (*Իսպանիայի «Որակի գնահատման և հավատարմագրման ազգային գործակալություն», 12.06.2016 թ.*) միջազգային այլ կառույցների կողմից: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանն առաջին անգամ 2015 թ. Հավատարմագրվել է ՈԱԱԿ-ի կողմից, սակայն մինչև հավատարմագրման ժամկետի ավարտն արդեն հավատարմագրվել էր նաև միջազգային այլ կառույցի կողմից (07.06.2018 թ.): Հավատարմագրված պետական բուհերից միայն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամն է հավատարմագրում ստացել 6 տարի ժամկետով, միջազգային կառույցների կողմից հավատարմագրված վերոնշյալ երկու բուհերը հավատարմագրում ստացել են 5 տարի ժամկետով, երեք բուհ՝ ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ը, «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը և «Եվրոպական համալսարան» հիմնադրամը ստացել են պայմանական հավատարմագրում երկու տարի ժամկետով, իսկ մյուս 16 բուհերը ստացել են հավատարմագրում 4 տարի ժամկետով: Ավելի խորքային ուսումնասիրության են ենթարկվել ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրված 20 բուհերը, որպեսզի վեր հանվեն արտաքին գնահատման թերությունները՝ ի դեմս ՈԱԱԿ-ի: Հավատարմագրված պետական բուհերից 3-ում՝ մեկական, 4-ում՝ երկուական, 11-ում՝ երեքական, 2-ում՝ չորսական չափանիշներ համարվել են առաջնահերթ լուծում պահանջող կամ բացասական գնահատված (աղյուսակ 1):



Աղյուսակ 1

**ՀՀ պետական բուհերի ինստիտուցիոնալ հավաքարմագրման առաջին փուլի ժամկետները և բացասական գնահատված (առաջնային լուծում պահանջող) չափանիշները**

№	Պետական բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը	Հավաքարմագրման ժամկետները		Առաջնային լուծում պահանջող չափանիշ
		Հավաքարմագրված է	Վավեր է մինչև	
1	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	02.2015 թ.	02.2021 թ.	1. 6-րդ
2	«Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	02.2015 թ.	02.2019 թ.	1. 6-րդ 2. 9-րդ
3	«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	03.2015 թ.	03.2019 թ.	1. 2-րդ 2. 3-րդ 3. 6-րդ
4	«Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամ	04.2015 թ.	04.2019 թ.	1. 6-րդ 2. 7-րդ 3. 10-րդ
5	«Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ	04.2015 թ.	04.2019 թ.	1. 9-րդ
6	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	05.2015 թ.	05.2019 թ.	1. 6-րդ 2. 9-րդ
7	«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	05.2015 թ.	05.2019 թ.	1. 6-րդ
8	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ	09.2015 թ.	09.2020 թ.	միջ. կառ. կողմից հավատարմ.
9	«Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	10.2015 թ.	10.2019 թ.	1. 2-րդ 2. 6-րդ 3. 7-րդ
10	«Ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ	10.2015 թ.	10.2019 թ.	1. 2-րդ 2. 6-րդ 3. 10-րդ
11	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ	07.2016 թ.	07.2020 թ.	1. 2-րդ 2. 3-րդ 3. 6-րդ
12	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	10.2016 թ.	10.2020 թ.	1. 2-րդ 2. 9-րդ 3. 10-րդ
13	«Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ	10.2016 թ.	10.2020 թ.	1. 6-րդ 2. 9-րդ 3. 10-րդ
14	«ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկ	05.2017 թ.	05.2021 թ.	1. 9-րդ 2. 10-րդ
15	«Գավառի պետական համալսարան» հիմնադրամ	06.2017 թ.	06.2021 թ.	1. 6-րդ 2. 7-րդ 3. 10-րդ
16	ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ	10.2017 թ. Պայման.	10.2019 թ.	1. 6-րդ 2. 9-րդ 3. 10-րդ
17	«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա» ՊՈԱԿ	02.2018 թ.	02.2022 թ.	1. 2-րդ 2. 3-րդ 3. 6-րդ

18	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ	02.2018 թ.	02.2023 թ.	միջ. կառ. կողմից հավատարմ.
19	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ	04.2018 թ. Պայման.	04.2020 թ.	1. 2-րդ 2. 6-րդ 3. 9-րդ 4. 10-րդ
20	«Եվրոպական համալսարան» հիմնադրամ	04.2018 թ. Պայման.	04.2020 թ.	1. 1-ին 2. 2-րդ 3. 6-րդ 4. 10-րդ
21	ՀՀ ՊՆ «Վ.Սարգսյանի անվան ռազմական համալսարան» պետական հիմնարկ	10.2018 թ.	10.2022 թ.	1. 6-րդ 2. 10-րդ
22	ՀՀ ՊՆ «Մարշալ Ա. Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարան» պետական հիմնարկ	10.2018 թ.	03.2022 թ.	1. 6-րդ 2. 10-րդ
<ol style="list-style-type: none"> <li>1. Առաքելություն և նպատակներ</li> <li>2. Կառավարում ու վարչարարություն</li> <li>3. Մասնագիտության կրթական ծրագրեր</li> <li>4. Ուսանողներ</li> <li>5. ՊԴ և ուսումնաստանողակ կազմ</li> <li>6. Հետազոտություն և զարգացում</li> <li>7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ</li> <li>8. Հասարակական պատասխանատվություն</li> <li>9. Արտաքին կապեր և միջազգայնացում</li> <li>10. Որակի ներքին ապահովման համակարգ</li> </ol>				

**Աղյուսակ 2**

**Բացասական գնահատված կամ առաջնահերթ լուծում պահանջող բուհերի քանակը՝ ըստ ինստիտուցիոնալ հավաքարմագրման չափանիշների**

1.	Առաքելություն և նպատակներ	1 բուհ
2.	Կառավարում ու վարչարարություն	8 բուհ
3.	Մասնագիտության կրթական ծրագրեր	3 բուհ
4.	Ուսանողներ	0 բուհ
5.	ՊԴ և ուսումնաստանողակ կազմ	0 բուհ
6.	Հետազոտություն և զարգացում	17 բուհ
7.	Ենթակառուցվածք և ռեսուրսներ	3 բուհ
8.	Հասարակական պատասխանատվություն	0 բուհ
9.	Արտաքին կապեր և միջազգայնացում	8 բուհ
10.	Որակի ներքին ապահովման համակարգ	11 բուհ

Վերոնշյալ վիճակագրությունից ակնհայտ է, որ ամենաշատ բացասական գնահատված կամ առաջնահերթ լուծում պահանջող չափորոշիչներից երկրորդ հորիզոնականում է «Որակի ներքին ապահովման համակարգը»: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որակի ներքին ապահովման համակարգի գործունեությունը դրական գնահատված բուհերում ևս առկա են խորքային և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ, որոնք չլուծելու դեպքում, ինստիտուցիոնալ հավատարմագրման հաջորդ շրջափուլերի ընթացքում ևս չենք կարող արձանագրել ցանկալի արդյունք: Ավելին, բավականին լուրջ և տեսանելի խնդիրներ են առկա արտաքին գնահատման գործ-

ընթացում, որոնք չվերանայելու դեպքում կվնասվի ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրման գործընթացի թափանցիկությունը և գնահատման արժանահավատությունը:

Բնականաբար, արձանագրված թերություններով հանդերձ, գրեթե բոլոր բուհերում ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում և հետո կատարվեց հսկայածավալ աշխատանք: Բուհի կառավարման համակարգում ընդգրկված յուրաքանչյուր դերակատար արժևորեց որակի արտաքին ապահովման կարևորությունը և բուհում որակի ապահովման մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը: Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձաքննության արդյունքում փորձագիտական խմբի խորհրդատվությունների, ինչպես նաև առկա ռեսուրսների և հնարավորությունների հիման վրա վերանայվեց բուհի ռազմավարական ծրագիրը, մշակվեց թերությունների վերացման գործողությունների ծրագիր՝ համապատասխան ժամանակացույցով և կատարողականի ցուցիչներով, կանոնակարգվեցին և հստակեցվեցին կառավարման համակարգում ընդգրկված ստորաբաժանումների և դերակատարների գործառնություններն ու պատասխանատվության շրջանակները: Բուհի կայքէջում թափանցիկ կերպով ներկայացվեցին բոլոր հաշվետվությունները, այդ թվում՝ ֆինանսական: Ներքին և արտաքին շահակիցներին տրամադրվեց բուհի կողմից իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկություն:

Այժմ կանգ առնենք **որակի արտաքին գնահատման հիմնախնդիրների վրա:**

Ակնհայտ է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման երեք փուլերից երկուսը՝ արտաքին գնահատումն անկախ փորձագիտական խմբի կողմից (փորձաքննություն) և հավատարմագրման հանձնաժողովի կողմից հավատարմագրման շնորհման կամ մերժման վերաբերյալ որոշման ընդունումը, իրականացնում է որակի ապահովման արտաքին համակարգը:

Հավատարմագրման ընթացակարգը բավականին թափանցիկ է, և բոլոր հավատարմագրված բուհերն անցել են պահանջված փուլերով:

Ուսումնասիրելով պետական բուհերից յուրաքանչյուրի ինստիտուցիոնալ հավատարմագրման ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, ՈԱԱԿ-ի եզրակացությունը և հավատարմագրման հանձնաժողովի որոշումը՝ եզրակացրեցինք՝ շատ համոզիչ են տվյալ չափորոշի դրական կամ բացասական գնահատելու որոշումը, խորհրդատվությունները և շնորհված ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամկետները: **Սակայն բոլորովին այլ պատկեր է ձևավորվում, երբ փորձում ենք գնահատումը տեսնել համեմատության մեջ: Բնականաբար, հարց է առաջանում՝ միևնույն թերություններն ունեցող բուհերին ինչո՞ւ է տրվել տարբեր ժամկետներով հավատարմագրում, ինչո՞ւ է ՈԱԱԿ-ի եզրակացությունը բազմաթիվ դեպքերում անհամատեղելի փորձագիտական զեկույցի եզրակացության հետ, ինչո՞ւ հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ ամրագրված առաջնահերթ լուծում պարունակող չափանիշները երբեմն կապ չունեն ՈԱԱԿ-ի եզրակացության հետ: Ակնհայտ է, որ հավատարմագրման հանձնաժողովը բուհերի համար, որպես ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փորձ, ցուցաբերել է մեղմ մոտեցում, սակայն վերոնշյալ խնդիրները չամրագրելու և չլուծելու դեպքում լուրջ հարված կհասցվի**

**ՈԱԱԿ-ի կողմից հավատարմագրման թափանցիկությանը և արժանահավատությանը:**

Ուսումնասիրությունների արդյունքում վեր հանվեցին ՈԱԱԿ-ի կողմից արտաքին գնահատման այն հիմնական թերությունները, որոնք վերաբերում են **գնահատման թափանցիկությանը և արժանահավատությանը:**

Պարզվեց՝

**1. Բացասական գնահատված չափանիշների քանակը և հավատարմագրման ժամկետները միմյանց հետ կապ չունեն:**

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց տվեցին, որ միևնույն քանակի չափանիշների բացասական գնահատման դեպքում հավատարմագրման հանձնաժողովի կողմից ընդունվել են էապես տարբեր որոշումներ:

**Օրինակ՝**

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ների ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցներում ընդամենը 1 չափանիշ է գնահատվել բացասական կամ առաջնահերթ լուծում պահանջող, սակայն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը ստացել է 6 տարի ժամկետով, իսկ մյուս երկուսը՝ 4-ական տարի ժամկետով հավատարմագրում: Նկատենք, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի դեպքում բացասական է գնահատվել նույն 6-րդ «Հեղափոխություն և զարգացում» չափանիշը, ընդ որում՝ ԵՊՀ-ն ավելի շատ մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ աստիճաններում, քան կառավարման ակադեմիան՝ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերով միասին:
- «Եվրոպական համալսարան» հիմնադրամը, ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ները պայմանական հավատարմագրում են ստացել 2 տարի ժամկետով: Մինչդեռ, ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում բացասական է գնահատվել 3 չափանիշ, իսկ մյուս երկուսում՝ 4 չափանիշ: Հատկանշական է, որ ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում բացասական են գնահատվել «Հեղափոխություն և զարգացում», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշները, որոնք «Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում նույնպես բացասական են գնահատվել, այնուհանդերձ շնորհվել է 4 տարով հավատարմագրում և այլն:

**2. ՈԱԱԿ-ի եզրակացությունները որոշ դեպքերում անհամատեղելի են փորձագիտական զեկույցի եզրակացության և հավատարմագրման հանձնաժողովի որոշման հետ: Խնդիրն առկա է հատկապես մայրաքաղաքում գործող մեծ բուհերի դեպքում:**

**Օրինակ՝**

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում փորձագետներն ամրագրել են, որ միայն «Հեղազոտություն և զարգացում» չափանիշը բավարարված չէ կամ, որ նույնն է, ունի առաջնահերթ լուծման կարիք: ՈԱԱԿ-ի ներկայացրած եզրակացությունում առաջարկվում է առաջնահերթ լուծում տալ «Մասնագիտական կրթական ծրագրեր», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ», «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին: Հավատարմագրման հանձնաժողովը որոշման մեջ ամրագրել է՝ առաջնահերթ լուծում տալ «Հեղազոտություն և զարգացում» ոլորտում առկա խնդիրներին: Ակնհայտ է, որ ՈԱԱԿ-ի եզրակացությունը կապ չունի փորձագիտական զեկույցի հետ, իսկ հավատարմագրման հանձնաժողովի որոշումն էլ կապ չունի ՈԱԱԿ-ի եզրակացության հետ:
- «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ամրագրված է, որ «Կառավարում և վարչարարություն», «Հեղազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ» չափանիշներն անբավարար են կամ, որ նույնն է, ունեն առաջնահերթ լուծման կարիք: ՈԱԱԿ-ի ներկայացրած եզրակացությունում առաջարկվում է՝ առաջնահերթ լուծում տալ «Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Հեղազոտություն և զարգացում», «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին: Հավատարմագրման հանձնաժողովը որոշման մեջ ամրագրել է՝ առաջնահերթ լուծում տալ «Կառավարում և վարչարարություն», «Հեղազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին: Ակնհայտ է, որ ՈԱԱԿ-ի եզրակացության մեջ ամրագրված «Մասնագիտության կրթական ծրագրեր» ոլորտի խնդիրներին առաջնահերթ լուծում տալն այս դեպքում ևս հակասության մեջ է փորձագիտական զեկույցի և հավատարմագրման հանձնաժողովի որոշման հետ:
- «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում ամրագրված է, որ «Հեղազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում» չափանիշներն անբավարար են կամ, որ նույնն է, ունեն առաջնահերթ լուծման կարիք: ՈԱԱԿ-ի ներկայացրած եզրակացությունում առաջարկվում է՝ առաջնահերթ լուծում տալ «Մասնագիտության կրթական ծրագրեր», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ», «Հեղազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին: Հավատարմագրման հանձնաժողովը որոշման մեջ ամրագրել է՝ առաջնահերթ լուծում տալ «Հեղազոտություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում» ոլորտներում առկա խնդիրներին: Այստեղ ևս ակնհայտ է, որ

ՈԱԱԿ-ի եզրակացությունը և մյուս երկու փաստաթղթերը խիստ հակասության մեջ են:

- «Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական գեկույցում ամրագրված է, որ «Հեղափոխություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում» չափանիշներն անբավարար են կամ, որ նույնն է, ունեն առաջնահերթ լուծման կարիք: ՈԱԱԿ-ի ներկայացրած եզրակացությունում առաջարկվում է՝ առաջնահերթ լուծում տալ «Մասնագիտական կրթական ծրագրեր», «Պրոֆեսորադասախոսական և ուսումնասովորական կազմ», «Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ» և «Որակի ներքին ապահովման համակարգ» ոլորտներում առկա խնդիրներին: Հավատարմագրման հանձնաժողովը որոշման մեջ ամրագրել է՝ առաջնահերթ լուծում տալ «Հեղափոխություն և զարգացում» և «Արտաքին կապեր և միջազգայնացում» ոլորտներում առկա խնդիրներին: Այստեղ ևս ակնհայտ է, որ ՈԱԱԿ-ի եզրակացությունը և մյուս երկու փաստաթղթերը հակասության մեջ են:

**Վերը բերված փաստերը ձևավորում են բավականին լուրջ հիմնախնդիր, քանի որ ՈԱԱԿ-ի եզրակացությունը, որը կազմվում է ոլորտի նեղ մասնագետների կողմից, կարևոր փաստաթուղթ պետք է համարվի ինստիտուցիոնալ հավատարմագրման որոշման ընդունման համար, սակայն որոշումները բոլորովին այլ պատկեր են ներկայացնում:**

**3. Ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներին համապատասխան չափորոշիչների գնահատումը թափանցիկ ներկայացված չէ:**

Գնահատումը կատարելիս փորձագիտական խումբը հետևել է «Հ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգին» և նկարագրված ընթացակարգին՝ իրականացնելով նախ չափորոշիչների, ապա նաև չափանիշների գնահատում: Փորձագիտական խումբը չափանիշը գնահատում է բավարար կամ անբավարար: Անբավարար գնահատել նշանակում է՝ հրատապ (առաջնահերթ) բարելավել այդ չափանիշի խնդիրները, իսկ բավարար գնահատել նշանակում է՝ համապատասխանում է չափանիշին, սակայն կարող է լինել բարելավման անհրաժեշտություն: Յուրաքանչյուր չափանիշ անաչառ գնահատելու համար ձևակերպված են չափորոշիչներ, որոնց գնահատման արդյունքում կորոշվի բուհի գործունեության համապատասխանությունը չափանիշի պահանջներին: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ փորձագետները յուրաքանչյուր չափորոշիչի գնահատման համար ամրագրել են արժանահավատ փաստերը և նշել բացթողումները: Սակայն, այս ամենով հանդերձ, թափանցիկ չի երևում՝ այդ չափորոշիչը բավարարում է պահանջները, թե՞ ընդհանրական եզրակացության հիման վրա միանգամից գնահատված է չափանիշը: Թափանցիկ չի երևում, թե չափորոշիչների քանի տոկոսի բավարարման դեպքում է դրական գնահատվում չափանիշը կամ որոնք են այդ ոլորտի առաջնահերթություն համարվող գործընթացները, որոնց արդյունքում չափանիշը կգնահատվի բավարար: Երբ ուսումնասիրվում է մեկ բուհի փաստաթղթային բազան, թերևս, գնահատումը թվում է արժանահավատ, սակայն տարբեր բուհերի փաստաթղթային

բազայի ուսումնասիրության, վերլուծության և համադրման ընթացքում առաջ են գալիս բազմաթիվ խնդիրներ և հարցեր, որոնք ստվերում են նաև գնահատման արժանահավատությունը:

### Օրինակ՝

#### 1. «Մասնագիտության կրթական ծրագրեր» չափանիշ

– «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում (ԳՊՄԻ, այժմ՝ «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ) իրականացվող բոլոր մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ), ըստ փորձագիտական զեկույցի, հավատարմագրման ժամանակ **ներկայացված են եղել ուսումնառության ելքային արդյունքներով** (գիտելիք, կարողություն, հմտություն): Փորձագիտական խումբը **դրական է գնահատել դասավանդման բազմաբնույթ մեթոդների ներառումը կրթական ծրագրերում**, դասընթացների նկարագրերում և թեմատիկ օրացուցային պլաններում, սակայն խնդրահարույց է, որ **որոշ դեպքերում** մեթոդի ընտրությունը պայմանավորված չէ կրթական վերջնարդյունքով:

– «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ում (ՀՊՏԿ), ըստ փորձագիտական զեկույցի, **ընդամենը մի քանի մագիստրոսական ծրագրեր են ներկայացվել ելքային արդյունքներով**, իսկ բակալավրական և մագիստրոսական մյուս կրթական ծրագրերը չեն ունեցել հավատարմագրման չափորոշիչներով պահանջված տեսքը: ՀՊՏԿ-ի համար ամրագրվել է, որ **դասավանդման և ուսումնառության մեթոդները համակարգված բնույթ չեն կրում**:

– «Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի (ԵՊԼՀ, այժմ՝ «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ) փորձագիտական զեկույցում ամրագրված է, որ առարկայական ծրագրերն ամբողջական են և մանրամասնորեն նկարագրված, սակայն **մասնագիտության վերջնարդյունքները նկարագրված չեն**: Ավելին, պետական կրթական չափորոշիչների բացակայության պայմաններում անհնար է որոշել ՄԿԾ-ների համապատասխանությունը չափորոշիչներին: Բուիը դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն է վարում, սակայն **անհնար է գնահատել դրանց համապատասխանությունը ՄԿԾ-ների՝ ուսումնառության ակնկալվող արդյունքներին՝ վերջիններիս բացակայության պատճառով**:

Այս ամենով հանդերձ, ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում ԳՊՄԻ-ի ՄԿԾ-ները գնահատվել են *բացասական*, իսկ ՀՊՏԿ-ում և ԵՊԼՀ-ում՝ *դրական*:

#### 2. «Հետազոտություն և զարգացում» չափանիշ

Ուսումնասիրելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ), «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի (ՀՀ ՊԿԱ), «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի (ԵՊԿ), «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (ՀՖԿՍՊԻ) ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցներում ամրագրված «Հե-

տագրություն և զարգացում» չափանիշի գնահատումը՝ չափորոշիչներին համապատասխան, **պարզվեց՝**

- ԵՊՀ-ն և ՀՀ ՊԿԱ-ն այդ ոլորտում իրենց առկա ռեսուրսներով և պահանջվող գործընթացներով ավելի առաջադեմ են, քան ԵՊԿ-ն և ՀՖԿՍՊԻ-ը: Սակայն ինստիտուցիոնալ հավարմագրման արդյունքում ԵՊՀ-ում և ՀՀ ՊԿԱ-ում «**Հետազոտություն և զարգացում» չափանիշը գնահատվել է բացասական, իսկ ԵՊԿ-ում և ՀՖԿՍՊԻ-ում՝ դրական:**

Բնականաբար, խնդրահարույց հարց է՝ այդ չափանիշի ո՞ր չափորոշիչներն են համարվել առավել կարևոր կամ ինչի՞ հիման վրա է արձանագրվել նմանատիպ պատկեր: Ուսումնասիրության արդյունքում բազմաթիվ են նմանատիպ օրինակները, սակայն այստեղ հարցն այն է, թե ինչու չափորոշիչների գնահատումը թափանցիկ չէ, որպեսզի տեսանելի լինի, թե քանի տոկոսի բավարարման դեպքում է չափանիշը գնահատվել դրական:

Այսպիսով, վերոնշյալ խնդիրները չլուծելու դեպքում լուրջ հարված կհասցվի ՈԱԱԿ-ի կողմից գնահատման արժանահավատությանը և բուհերի հետագա զարգացմանն ու մրցակցությանը:

**Եզրակացություն:** Ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով արտաքին գնահատման համակարգի թափանցիկության և արժանահավատության ուսումնասիրության ընթացքում վեր հանվեցին մի շարք հիմնախնդիրներ: Այդ խնդիրների լուծման համար առաջարկվում են լուծումներ, որոնք ներդնելու դեպքում, անկախ նրանից, որ գործ ունենք տարբեր փորձագիտական խմբերի հետ, միևնույնն է, ավելի կկանոնակարգվի արտաքին գնահատման գործընթացը՝ դառնալով առավել արժանահավատ և թափանցիկ:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է **վերանայել «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկը»՝ նկատի ունենալով հետևյալ դիտարկումները.**

**1. Թափանցիկ գնահատել (բավարար, անբավարար) ոչ միայն չափանիշը, այլև չափանիշին համապատասխան չափորոշիչներից յուրաքանչյուրը,**

**2. սահմանել չափանիշի դրական գնահատվելու կապը համապատասխան դրական գնահատված չափորոշիչների տոկոսի հետ:**

Տվյալ չափանիշը գնահատել դրական, եթե դրական են գնահատվել չափորոշիչների 70%-ից ավելին (կլորացնել ստացված թիվը): Ընտրվել է 70%-ից ավելին՝ նկատի ունենալով, որ 100 միավորային համակարգում 70-ից բարձր միավորը համարվում է «լավ», ընդ որում 71 միավորը համարժեք է «4-ի»:

Օրինակ, «Մասնագիտության կրթական ծրագիր» չափանիշն ունի 5 չափորոշիչ: Չափանիշը կգնահատվի *դրական*, եթե *դրական* է գնահատվել 4 չափորոշիչը (3,5 թիվը կլորացված է):

**3. Սահմանել ինստիտուցիոնալ հավատարմագրման ժամկետի կապը բացասական գնահատված չափանիշների քանակի հետ:**

Նկատի ունենալով, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման տրամադրման առավելագույն ժամկետը 6 տարի է, իսկ պայմանական հավատարմագրման ժամկետը՝ 2 տարի, ապա, ելնելով ինստիտուցիոնալ հավատար-



մագրման առաջին շրջափուլի արդյունքներից, առաջարկվում է՝ այս երկու բաղադրիչների միջև հաստատել հետևյալ կապը:

Աղյուսակ 3

N	Հավատարմագրման ժամկետ	Բացասական գնահատված չափանիշների քանակ
1	6 տարի	0
2	5 տարի	1
3	4 տարի	2
4	2 տարի պայմանական	3, 4
5	Մերժել հավատարմագրումը	4-ից ավելի

Այսպիսով, առաջարկվում է վերոնշյալ կետերը ավելացնել «ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկում», որի իրականացումը ՈԱԱԿ-ի կողմից կբարելավի արտաքին գնահատման արժանահավատությունը և թափանցիկությունը: Ավելին, բուհերի համար նաև հնարավոր կլինի առանձնացնել այն չափանիշները կամ չափորոշիչները, որոնք համապատասխան բուհում առաջադիմական են, և ՀՀ բուհերի միջև կհաստատվի նաև լավագույն փորձի փոխանակման մշակույթ:

#### Օգտագործված գրականություն

1. Բուդաղյան Ա., Սարգսյան Յու., Մանասյան Ն., Սանթրոջյան Մ., Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում, Զեկույց, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2012, 222 էջ:
2. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում, Ուղեցույց, 2008, 74 էջ:
3. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի համապատասխանեցումը Եվրոպական (ENQA) ստանդարտներին և ուղենիշներին: Բարեփոխումների ռազմավարության հայեցակարգային հիմնադրույթներ: Եր., Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, 2007, 48 էջ:
4. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի պաշտոնական կայք՝ <http://anqa.am/>:
5. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթական համակարգի՝ Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման գործընթացի ընդլայնման ծրագիր, հաստատված ՀՀ Կառավարության 2012 թ. մարտի 15-ի N10 որոշմամբ (հավելված 1), 18 էջ, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=65578>:
6. Կոնվենցիա Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24442>:
7. Բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական սանցիացիայի (ENQA) պաշտոնական կայք՝ <https://enqa.eu>:

8. Standards and Guidelines for Quality Assurance in European Higher Education Area (ESG). 2015. Brussels, Belgium. 27 p., [https://enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG\\_2015.pdf](https://enqa.eu/wp-content/uploads/2015/11/ESG_2015.pdf).
9. Guide to The Bologna Process, The UK HE Europe Unit, January 2005, <https://www.unl.pt/data/qualidade/bolonha/guide-to-the-bologna-process.pdf>.

**ВАРДЕВАН ГРИГОРЯН***Депутат НС РА, доктор педагогических наук, профессор***АНАИТ ФАРМАНЯН***кандидат физико-математических наук, доцент*

**Проблемы внешней оценки качества вузов РА.** – В мае 2005 года Армения официально присоединилась к Болонскому процессу, чтобы сделать армянскую систему образования международно признанной и конкурентоспособной, взяв на себя ответственность за интеграцию в Европейское пространство высшего образования (ЕПВО). Одним из важнейших принципов создания ЕПВО является обеспечение качества образования.

В ноябре 2008 года правительство РА создало “Национальный центр обеспечения качества профессионального образования” (НЦОК), основной целью которого является реализоване процесса внешнего обеспечения качества посредством государственной аккредитации высшего учебного заведения, способствуя повышению прозрачности и подотчетности университета, поддерживая создание культуры качественного образования в университете.

К 30 декабря 2018 года все вузы на территории РА должны были пройти институциональную аккредитацию. Институциональная аккредитация - это повторяющийся (циклический) процесс, который удостоверяет соответствие деятельности университета критериям аккредитации, утвержденным правительством РА. Институциональная аккредитация является важным процессом с точки зрения оценки эффективности систем управления вузов и обеспечения качества предоставляемого образования.

После первого цикла институциональной аккредитации важной и актуальной задачей является изучение эффективности и проблем процесса внешнего обеспечения качества вуза в лице НЦОК.

В результате исследований выявлены проблемы, связанные с прозрачностью и достоверностью внешней оценки для институциональной аккредитации, предлагая решения.

**Ключевые слова:** *Болонский процесс, институциональная аккредитация, внешнее обеспечение качества, внешняя оценка качества.*

JEL: I23, I28

**VARDEVAN GRIGORYAN**

*Deputy of RA NA, Doctor of Pedagogical Sciences, Professor*

**ANAHIT FARMANYAN**

*PhD in Physical and Mathematical Sciences, Associate Professor*

***Issues of Quality External Assessment of RA Higher Educational Institutions.***– To make RA Higher Education System recognized and competitive, Armenia officially joined the Bologna process in May 2005 taking the responsibility to get integrated into the European Higher Education Area (EHEA). One of the key principles of EHEA is quality assurance of education.

In November 2008, the Government of the RA established the “National Centre for Professional Education Quality Assurance” Foundation (ANQA), which aims at implementing quality external assurance process through state accreditation of the higher education institution, thus promoting transparency and accountability of the HEI, supporting the introduction of the quality education culture in the HEI. By December 30, 2018, all RA HEIs had to get institutional accreditation. Institutional accreditation is a mandatory cyclical process that certifies the relevance of the HEI activities to the accreditation standards approved by the RA Government. Institutional accreditation is an important process from the viewpoint of the assessment of the HEI management system activity efficiency and the quality of the education the HEI provides.

After the first cycle of the institutional accreditation, the study of the efficiency of the HEI quality external assurance process and its problems is an important and up-to-date issue by ANQA.

As a result of the studies, issues related to the external assessment transparency and credibility for institutional accreditation are revealed and solutions are proposed.

**Key words:** *Bologna process, institutional accreditation, quality external assurance, quality external assessment.*

JEL: I23, I28